№ 184 Հոկտեմբերի 6 (18) 1881 Հոկտեմբերի 6 (18) № 184

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

Դարձեալ խնդրում ենք „ՄՇԱԿԻ" բաժանորդներից, որոնք մինչև այժմ չեն վճարել մեր լրագրի անցեալ կամ ներկայ տարվայ բաժանորդական վճարը, շուտով հասցնել մեզ իրանց պարտքը։

Մի և նոյն ժամանակ յայտնում ենք որ „Մշակին" կարելի է գրվել երեք ամսով, վճարելով 3 րուբլ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միշտ մատնութիւն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ․ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ․ «Journal d'Orient» լրագրի յօդուած։ Շվէյցարիա։ Գերմանիա։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԻՇՏ ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

—

Հայի ամենաստոր յատկութիւններից մինը մատնողական ոգին է։ Հայը իր ամբողջ պատմութեան մէջ ցոյց է տուել այդ յատկութիւնը։ Հայը կը խոնարհվի ստրկաբար օտարի առջև, իսկ իր ազգակցին, թէ կուզ դա լինի ազգային ամենանշանաւոր գործիչներից մինը, պատրաստ է միշտ մատնել, նրան կորցնելու համար։

Եւ յետոյ հայը զարմանում է թէ չունի շատ գործիչներ, թէ եղածներն էլ անխստահ անձինք են, անձնուիրութիւն չունեցող մարդիկ են։ Բայց ո՞վ կը ցանկանայ գործիչ լինել մի ազգի մէջ, որտեղ ամեն բոպէ նա կարող է ենթարկվել ամենաստոր մատնութեանը։ Ինչ որ հայը անում է իր գործիչների վերաբերութեամբ, նոյնն անում է նա և իրան հակառակ գաղափարներ ունեցող անձերի կամ կուսակցութիւնների վերաբերութեամբ։

Մի ազգութիւն, որ ինքն իր բոլոր ոյժերը ոչնչացնում է անդադար ամենաստոր մատնութիւններ անելով իր եղբայրակիցների դէմ, այդ տեսակ ազգութիւն երբէք առաջ գնալ չէ կարող մտաւոր և բարոյական ազգային զարգացման ասպարիզում։

Դեռ մանուկ հասակից մենք յիշում ենք որ ամեն փոքր ի շատէ նշանաւոր գործիչ հայերի մէջ միշտ դրօշմվում էր հայերի մէջ անպիտան, դաւաճան, ազգուրաց, մատնիչ բառերով։ Մարդը շուարած է մնում, չը գիտէ ի՞նչպէս որոշէ ճշմարիտը ստուտից․ միայն մի բան հաստատ է, որ բոլորն էլ միմեանց մատնում էին, միմեանց դէմ դաւադրութիւն անում, միմեանց կորցնել էին աշխատում....

Այսպիսի մի ազգ ոչ թէ միայն արհամարհելի և ատելի է, բայց այդ տեսակ ազգութիւն չէ էլ կարող ազգութիւն անուանվել և որպէս ազգ գոյութիւն էլ չէ կարող ունենալ։

Մի հայ պատահմամբ անձնական թշնամութիւն ունի միւս հայի հետ,—անմիջապէս այդ անձնական թշնամութեանը հետեւում է մատնութիւնը։ Թող յիշեն հայերից առաջնամիտները, ո՞րը մեր գործիչներից թէ հին և թէ նոր ժամանակներում մատնված չէ եղել նոյն իսկ հայերից։

Նախ հայը աշխատում է մի ուրիշ հայի մասին լուր տարածել թէ նա դաւաճան է ազգին, իսկ երբ որ այդ չէ ազդում, այն ժամանակ նա նոյն մարդուն մատնում է...

Այդ տեսակ գեղեցիկ յատկութիւններով մի ազգութիւն դեռ յանդգնում է պարծենալ իր անցեալով, յանդգնում է գովել իր ներկան և յուսալ իր ապագայ բարոյական, մտաւոր, տնտեսական և հասարակական զարգացման վրա։

Գ․ Ա․

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոսկվա, 24 սեպտեմբերի

Երեք տարի սրանից առաջ ստորագրութիւն բացանելով, ժողովեցի յօգուտ «Արարատեան ընկերութեան» հարիւր րուբլ, որը իր ժամանակին հասցրի «Մշակի» խմբագրութեանը։ Շարունակելով ստորագրութիւնը դարձեալ ժողովեցի (46 ր. 50 կ.) քառասուն րուբլ յիսուն կոպէկ։ Այս գումարը ուսանող Յ. Միրիմանեանի միջնորդութեամբ յանձնեցի մի Թիֆլիսեցի վաճառականի, որը պէտք է հասցնէր «Մշակի» խմբագրութեանը։ Երկար ժամանակից յետոյ վերջապէս իմացայ, որ գումարը ձեր խմբագրութեանը չէ հասցրել վաճառականը. յետ ստանալով այս օրերս վերոյիշեալ գումարը (46 ր. 50 կ.,) ուսանող Միրիմանեանի միջնորդութեամբ, ուղարկում եմ յօգուտ «Միացեալ ընկերութեան» քառասուն ու վեց րուբլ, փոստի ծախսը հանելով։

Ն․ Աբէլեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Գերուսի, 20 սեպտեմբերի

Անցեալ տարի «Մշակի» համարներից մէկում ես յայտնել էի, որ մտադիր եմ դատ սկսելու «Պսակի» նախկին աշխատակից պ. Թ. Ջ.-ի դէմ նրա դէպի ինձ ուղղած մի քանի կլնտօյական ուշունցների առիթով։ Ես համոզված էի և համոզված եմ այժմ, որ անկիրթ և անսանձ վայրենիների վրա կարող է ազդել միայն օրէնքը իր արդարադատութեամբ։ Բայց որովհետև ես ծառայական պատճառներով անկարող եմ Երևան գալ—ուր պէտք է սկսվէր դատը—իսկ իմ հակառակորդը, կարծեմ, գտնվում է հիւսիսում, ուր գնացել է դեռ նոր սովորելու քաղաքավարութեան և մարդավարութեան տարրական կանոնները, ես դժբաղդաբար ստիպված եմ թողնել յիշեալ դատը։ Իսկ որ ես իրաւունք ունէի այդ դատը սկսելու, դրանում կարելի է համոզվել կարդալով «Պսակի» անցեալ տարվայ № 30-ի գծի տակ զետեղված յօդուածը և 1,040 ст. улож. о нак.

Ս․ Դաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք յօգուտ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի 1 րուբլ Նոր-Նախիջևանից, Յակոբ քահանայ Նախաշեանից, 48 րուբլ Մայկոպից հետեւեալ անձինքներից. գեներալ Իվան Նազարօվից, Ստեփան Ալիխանեանից, Գէորգ Շապօշնիկեանից, Գրիգոր Բերբերեանից, Գասպար Մուրադեանից և Նիկողայոս Ալխանեանից։ Ստացանք նոյնպէս Թիֆլիսից, բժիշկ Յարութիւն Վարդանեանից 4 րուբլ, Մ. Սարգսեանից 4 րուբլ, և Բագուից Արմենակ Տէր-Յակոբեանից մի առաջ ոսկի, որ այս օրվայ կուրսով արժէ 7 րուբլ 63 կոպէկ։ Առաջվայ 1,242 ր. 50 կոպէկի հետ կանի 1,307 րուբլ 13 կոպէկ։ Բայց, որովհետև չաբաթ օր ուղարկեցինք 400 րուբլ Վիէննայի ֆրանսիական թերթին, ուրեմն մնում է մեր խմբագրութեան մէջ 907 րուբլ 13 կոպէկ։

—

Ազնաուրից, Նիկողոս Տէր-Ստեփանեանից ստացանք 47 րուբլ յօգուտ «Journal d'Orient» լրագրի հետեւեալ անձինքներից, որոնց թւում կան ոչ թէ միայն հայեր, ռուսներ և վրացիներ, բայց մինչև անգամ և մահմետականներ։ Նիկողայոս Տէր-Ստեփանեան 3 րուբլ, Յովհաննէս Գոզալեան 8 ր., Նիկողայոս Ղուկիջանեան 4 ր., Նուբար Մէլիք-Նուբարեան 4 ր., Ղազար Գոձեան 4 ր., Կոստանտին Տէր-Մատթէոսեան 2 ր., Դաւիթ Եարեան 1 ր., Մէլքոյ Սիմօնեանց 1 ր., Ալէքսանդր Ամիրխանեան 2 ր., Николай Михайловичъ Тихоцкій 1 ր., Իվանէ Քիտիշվիլի 1 ր., Ալի Հուսէյն օղլի 40 կոպ., Իսրայէլ Սահակեան 2 ր., Մնացական Տէր-Յովհաննէսեան 2 ր., Մկրտում Սահինեան 1 ր., Սօսիկօ Խալվաստանա-Շվիլի 1 ր., Շաքրօ Գոմէլա-Շվիլի 1 ր., Ղազար Ջալեան 1 ր., Ալէքսի Բարնաբի-Շվիլի 1 ր., Մահմուդ Ալի օղլի 60 կ., Սարգիս Տղալաձէ 1 ր., Прокофій Антоновичъ Ивановъ 1 ր., Յովհաննէս Սափարեան 2 ր., Князь Николай Григоріевичъ Черкезовъ 1 ր., Արտէմ Սարգսեան 1 րուբլ։ Ընդամենը 47 րուբլ։ Ստորագրութիւնը շարունակվում է։ Նախկին փողերի հետ կանի 954 րուբլ 13 կոպ.։

—

Ֆրանսիական խումբը շարունակում է չաբաթը երկու երեք անգամ իր ներկայացումները տալ Արծրունու թատրոնում։ Հասարակութիւնը, ինչպէս երեւում է մեծ ուրախութեամբ յաճախում է այդ ներկայացումները և հանդիսականները գրեթէ ամբողջ ժամանակ սրտով ծիծաղում են։ Հինգշաբթի էլ կայ ներկայացում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„JOURNAL d'ORIENT" ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾ

—

Վիէննայի ֆրանսիական թերթը իր № 40 մէջ տպված առաջնորդող յօդուածում դիմելով Աւստրիայի կայսրին, որ նոյեմբերումն գահական ճառ է ասել ունգարական պարլամենտի բացման առիթով, որի մէջ կայսրը յայտնել է թէ քաղաքական կախ մնացած հարցերից շատերը պէտք է վճռվեն Եւրոպայի ընդհանուր համաձայնութեամբ, իր կողմից ասում է հետեւեալը։ „Աւստրո-Ունգարիան ունի կատարելու մի պարտաւորութիւն. նա պէտք է աշխատի ճշգութեամբ կատարել տալու Բերլինի դաշնագրի դեռ չը լուծված յօդուածները։ Առանց հոգալու մինիստրութեան փոփոխութեան մասին, մենք ամենախոնարհ կերպով ենթարկում ենք աւստրիական գահի առջև մեր խնդիրը այն դատի մասին, որ արդէն մի քանի ամիս շարունակ չենք դադարել պաշտպանելու. դա թիւրքաց հայերի դատն է։ Յուսանք որ միապետը մեզ կը լսի և կը գործ դնի իր օգոստափառ ազդեցութիւնը Բ. Դրան վրա ներգործելու համար, որպէս զի կատարվի մարտիրոս ազգի փրկութեան գործը, այն ազգի, որ պահանջում է միմիայն Եւրոպայի յանձն առած պարտաւորութիւնների իրագործելը, որով նա կազատվի այն ճնշումից, որի տակ նա այժմ, աւելի քան երբէք հառաչում է։"

Ֆրանսիական լրագիրը շարունակում է ասելով, որ Ֆրանց-Յովսէփ կայսրի թագի մէջ կայ մի տիտղոս, Երուսաղէմի թագաւորի տիտղոսը, որ նրա վրա, որպէս խաչակիրների յաջորդի, պարտաւորութիւն է դնում հոգալ մի ճնշված քրիստոնեայ ազգութեան մասին։

Աւստրո-Ունգարիան, ասում է „Ժուրնա դ'Օրիան" լրագիրը, պէտք է աշխատի պահպանել իր ազդեցութիւնը արևելքում, որ նա ձեռք է բերել մեծ զոհաբերութիւններով։ Այդ պետութիւնը չէ կարող առանձնանալ և թողնել ուրիշներին հայոց խնդիրը կարգադրելու գործի մասին հոգսը։ Այդտեղ ոչ թէ նուաճման կամ արշաւանքի խնդիր կայ, աւելացնում է ֆրանսիական թերթը, այլ հարցը վերաբերվում է մի ազգի փրկութեան, որ միշտ եղել է հաւատարիմ իր կառավարութեանը, բայց միշտ ճնշված մահմետական բռնութեան տակ։

Եւ „Ժուրնալ դ'Օրիան" լրագիրը վերջացնում է իր յօդուածը հարցնելով․ „միթէ Աւստրիայի առաքելական կայսրը, կարող է տատանել։"

ՇՎԷՅՑԱՐԻԱ

—

Ժընևվի մէջ կայացաւ խաղաղութեան և ազատութեան միջազգային միութեան նիստը, որ տասն և չորս տարի գոյութիւն ունի և որ վեցերորդ անգամ նիստ է կայացնում Ժընևվայի մէջ։ Այս անգամ ժողովը չորս վճիռներ կայացրեց։ Առաջին վճիռը հաւանութիւն է տալիս այն միջոցներին, որոնց գործադրեց միութեան մասնաժողովը Ֆրանսիական և ամերիկական հանրապետութիւնների մէջ բանակցութիւններ սկսելու համար միջազգային միջնորդ դատարանի վերաբերեալ դաշնագրի մասին։ Միութիւնը ցանկութիւն է յայտնում, որ միւս պետութիւններն էլ մասնակցեն այդ դաշնագրին։ Երկրորդ վճռով միութիւնը շնորհակալութիւն է յայտնում Գլադստոնի կառավարութեանը, որ նա խաղաղութիւն կայացրեց բօերների հետ և դրանով ապացուցեց, թէ Անգլիան յարգում է միջազգային իրաւունքի հիմնական սկզբունքը, ճանաչելով իւրաքանչիւր ազգութեան իրաւունքը ինքնավարութիւնը ունենալու համար։ Երրորդ վճռով միութիւնը պախարակում է հրէաների դէմ հալածանք յարուցանողներին և շնորհակալութիւն է յայտնում այն կառավարութիւններին, որոնք պաշտպանեցին հալածվածներին։ Վերջը միութիւնը պախարակում է Ֆրանսիային Տունիսի անկախութեանը ձեռնամուխ լինելու համար։

ԳԵՐՄԱՆԻԱ

—

„Köln. Zeit." լրագրին հաղորդում են, որ սխալ է Վիէննայի լրագիրների հաղոր-

դած լուրը, իբր թէ Գրանիցա կայսրանի մօտ պէտք է կայանայ գերմանական, ռուսաց և աւստրիական կայսրերի տեսութիւնը։ Քաղաքական շրջանների մէջ այդ մասին ոչինչ յայտնի չէ։ Վիլհելմ կայսրը Մեկլենբուրգից վերադառնալուց յետոյ մըտադիր չէ ոչ մի տեղ ուղևորվել։

Առաջադէմ կուսակցութեան առաջնորդ Ռիխտեր Բերլինի մէջ իր ընտրողների առաջ մի ճառ արտասանեց, որով այնքան իշխան Բիսմարկի վրա չէր յարձակվում, որքան ընդհանրապէս պահպանողականների վրա։ Նրանց գործունէութեան հետևանքը, Ռիխտերի կարծիքով, սոցիալիստների դէմ օրէնքի հրատարակելը, պատերազմական բիւդժետի մեծացնելը, հարկերի շատացնելը և անձնական ու տնտեսական ազատութեան սահմանափակումն են։ Ռիխտեր յոյս ունի, որ Բերլինը անպատճառ առաջադէմներին կընտրէ, որովհետև նա նրանց ընտրում էր և այն ժամանակ, երբ իշխան Բիսմարկ ամենամեծ հեղինակութիւն ուներ։ Եթէ իշխան Բիսմարկին կաջողվի այնպիսի բայխստագ կազմել, որի մեծամասնութիւնը իր կողմը կը լինի, նա անպատճառ երկու օրինագիծներ կը ներկայացնի՝ ծխախոտի արտոնութեան և ցորենի մաքսավճարը մեծացնելու մասին։

Պրոֆէսոր Ադոլֆ Վագներ բազմաթիւ ընտրողների առաջ մի ճառ արտասանեց, որի մէջ ի միջի այլոց նկատեց, թէ միայն մանրակրկիթ մարդիկ կարող են ընդդիմանալ կառավարութեան ընդարձակ գաղափարներին, որի նպատակն է երևելի դարձնել Գերմանիային։ Այնուհետև Վագներ ասաց, որ նա կը պաշտպանի կաթոլիկ եկեղեցու հետ պատութեան կռուի ընդհատելը և կընդդիմանայ արտաքոյ կարգի օրէնքներին հրէաների դէմ։

Բերլինից հեռագրում են „Порядокъ“ լրագրին, որ Վիլհելմ կայսրը, կարլսրուէ քաղաքի մէջ եղած ժամանակ ստացաւ մի անանուն սպառնող նամակ։ Նամակի գրողը կալանաւորված է։ Դատաստանական քննութիւնը սկսված է։ Բերլինում, ինչպէս հեռագրում են նոյն լրագրին, մի մեծ ընտրողական ժողով տեղի է ունեցել այս օրերս, որտեղ առաջարկված է եղել պրոֆէսոր Վիրխովի, որպէս բայխստագի անդամ։ Նրա կանդիդատութիւնը պաշտպանելու համար միացել են այս անգամ հակառակ բանակների, ազգային-ազատամիտների և պրոգրէսիստների (առաջադիմականների) ներկայացուցիչները։ Մի և նոյն ժողովի մէջ խօսել են, Վիրխովին պաշտպանելու համար, ազատամիտ Լասկէր և պրոգրէսիստ Ռիխտէր։ Երկուսն էլ ուշադրութեան արժանի ճառեր արտասանեցին, որոնց մէջ խստութեամբ քննադատեցին իշխան Բիսմարկի քաղաքականութիւնը։ Թէ Լասկէրի և թէ Ռիխտէրի ճառերը մեծ ընդունելութիւն գտան ժողովի կողմից։ Այդ երկու քաղաքական անձնաւորութիւնները առաջ միմեանց թշնամի կուսակցութիւններին էին պատկանում, բայց այժմ, ընդհանուր վտանգի առաջ, Բիսմարկի ձնշող քաղաքականութեանը ընդդիմադրելու և պրոգրէսիստ Վիրխովի ընտրութիւնը պաշտպանելու համար, մի կուսակցութեան մէջ միացան։ Վաղուց է արդէն որ սպասում էին գերմանական ազատամիտ մեծ կուսակցութեան երկու նշանաւոր ճիւղերի, պրոգրէսիստների և Նացիօնալ-լիբերալների միմեանց հետ միանալը, բայց միայն այժմ այդ դաշն համարվում է կատարված իրողութիւն։ Անտարակոյս, գերմանական բոլոր ազատամիտ կուսակցութիւնների միանալը կարող է այժ տալ գերմանական առաջադէմ քաղաքական տարրին և այդ տարրը այն ժամանակ կարող է յաղթող հանդիսանալ պահպանողական և յետադէմ կուսակցութիւնների վրա։

Լրագիրները հաղորդում են, որ Բերլինում դիտաւորութիւն ունեն հանդիսաւոր կերպով տօնել Վիրխովի վաթսունամեայ յօբելեանը և Բերլինի համալսարանի մէջ նրա պրոֆեսորութեան քսան և հինգ ամեայ տարեդարձը։ Այդ հանդէսը կը կատարվի նոյեմբերի 7-ին (19-ին) Բերլինի քաղաքացին վարչութեան դահլիճի մէջ։

ՖՐԱՆՍԻԱ

Քաղաքական շրջանների մէջ հաւատացնում են, որ հանրապետութեան նախագահը վերջին ժամանակներում շուտ շուտ է խորհրդակցում Ժիւլ-Սիմոնի հետ քաղաքական գործերի դրութեան մասին։ Ասում են, որ նրանց կարծիքները գրեթէ ոչինչով չեն զանազանվում և որ Գրեվի կամենում է յանձնել Ժիւլ Սիմոնին նոր մինիստրութեան կազմելը։ Այդ ենթադրութիւնը, մի քանի լրագիրների կարծիքով, հաւանական չէ։

Նորերում Լօնդօնի „Morning Post“ լրագիրը հաղորդում էր, որ իբր թէ ռուսաց կառավարութիւնը անբաւական է Ֆրանսիական կառավարութենից, որովհետև վերջինը հրաժարվեցաւ մասնակցել միջազգային միջոցների գործադրելուն քաղաքական յանցաւորների դէմ։ Այդ առիթով „Հավասի“ ընկերութիւնը նկատում է.“ Այդ լուրը ճիշդ չէ։ Ռուսաց կառավարութիւնը վաղուց առաջարկել է կօնֆերենցիա կազմել միջազգային դաշնակցութիւն կազմելու համար քաղաքական յանցաւորների դէմ։ Գերմանիան և Աւստրօ-Ունգարիան ընդունեցին այդ առաջարկութիւնը, որ մերժվեցաւ Ֆրանսիայից և Անգլիայից։ Ֆրանսիական կառավարութիւնը, հրաժարվելով մասնակցել կօնֆերենցիային, այնուամենայնիւ պատրաստակամութիւն յայտնեց դաշնագիր կապել Ռուսաստանի հետ յանցաւորների վերադարձնելու մասին։ Դեռ երեք տարի առաջ Ֆրանսիական սենատը հաւանութիւն տուեց Դիւֆօրի առաջարկած օրինագծին ընդհանրապէս յանցաւորներին յանձնելու մասին, բայց այդ օրինագիծը դեռ քննված չէ պատգամաւորների ժողովից։ Այդ պատճառով անհրաժեշտ է, որ յիշեալ օրինագիծը Ֆրանսիական ազգային երկու ժողովների հաւանութիւնը ըստանայ և յետոյ Ֆրանսիական կառավարութիւնը կարող է բանակցութիւններ սկսել Ռուսաստանի հետ մի դաշնագիր կապելու համար յանցաւորներին վերադարձնելու մասին։ Հաւանական է, որ այդ օրինագիծը կառաջարկվի պատգամաւորների ժողովին Նրա պարապմունքների առաջիկայ շրջանի ընթացքում։ Հարցը այդ դրութեան մէջ է գտնվում և հիւսիսային պետութիւնները սպասում են Ֆրանսիական ազգային ժողովների վճռին, որպէս զի կարողանան նոր առաջարկութիւններ անել։

Գենեռալ Սօսիէ Տունիսից վերադարձել է Ալժիրիա, որովհետև նա համաձայն չէ մինիստրութեան կարծիքի հետ Կէրուանի վրա արշաւելու մասին։ Մինիստրները պահանջում են անյապաղ արշաւել այդ քաղաքի վրա, մինչդեռ գենեռալ Սօսիէի կարծիքով այդ արշաւանքը պէտք է յետաձգել մինչև նոյեմբերը։ Մինիստրութիւնը ցանկանում է ճնշել ապստամբութիւնը մինչև այն օրը, երբ կը գումարվի պատգամաւորների ժողովը։

Եթէ այժմեան մինիստրութիւնը փոխվի, Ֆրանսիական մի քանի նոր դեսպաններ կը նշանակվեն։ Ս. Պետերբուրգի, Բերլինի և Վիէննայի այժմեան դեսպանների տեղ նորերը կը նշանակվեն։ Ինչպէս երևում է Գամբետտայի մինիստրութեան կազմվելուց յետոյ Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը աւելի եռանդոտ ուղղութիւն կը ստանայ։ Գամբետտայի անհաշտ թշնամի արմատականները բոլոր միջոցներով աշխատում են խանգարել նրա մինիստրութեան կազմվելուն և առաջուց ցեխ են գցում և խայտառակում են այդ մինիստրութեան ապագայ անդամներին։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 21 սեպտեմբերի 1881

Գիտէք ինչ եղաւ «Մշակի» և իր համախոհներուն քարոզած գաղափարներուն անմիջական արդիւնքն։ Ահաւասիկ։

Երեք տարի առաջ, պատերազմը նոր վերջացեր էր, առաջին անգամ հայ անունը տէրութեանց դաշնադրութեան մը մէջ անցեր էր։ Մէկ քանի անձինք, որոց գլուխը կը գտնուէր Ներսէս պատրիարքը, մտածեցին որ ալ ազգին ժամանակ էր կենդանութեան նշան տալու. թէ օտարին պաշտպանութիւնը որքան որ մեզի երաշխաւորված էր, որ այս պատճառին համար, պէտք էր որ մենք ալ մեր կողմէն անփոյթ չը մնանք և գաւառացի ազգայնոց վիճակին վրայ քիչ մը աւելի խորհենք, հոգանք անոնց անմիջական պէտքերն և դարմանենք ժամ յառաջ անոնց ամենէն փտեցուցիչ վէրքերը։ Վերջապէս պէտք է կ. պոլսեցի, քաղաքացի և գիւղացի մի և նոյն կապով միացնել և այս նպատակին հասնելու համար հարկ էր, ամեն դասի մարդոց, բայց մանաւանդ նիւթական և մտաւորական կարողութիւն ունեցողներուն աջակցութիւնը իրար բերել։ Եւ կազմուեցաւ «Ցնտեսական միութիւն հայոց» անուն ընկերութիւնը։ Ներսէսի նախագահութեամբ մէկ կամ երկու նիստեր եղան, յանձնախումբեր կազմուեցան (բնականապէս) և... այն օրէն իվեր խօսքն անգամ ընող չը կար այդ ընկերութեան։ Ամեն մարդ քիչ կամ շատ խելքը տուաւ այն հաստատութիւններուն, որոնց նպատակը սոսկ ուսմունք տարածել էր և որոնք հաստատ կերպով կը քարոզէին թէ այն էր ազգին միակ փրկութեան ճանբան։

«Մշակը» եղաւ որ առաջին անգամ տնտեսական մասին հրապարակաւ ամենուն ուշադրութիւնը հրաւիրեց և այս տարի միայն, հինգ վեց ամիս առաջ, կ. Պոլսոյ մէջ յուզուեցաւ այդ հարցը և մեծ արձագանք գտաւ, մանաւանդ ի չնորհս ձեր աշխատակից պ. Նիկողոսեանին հանած աղաղակին, որու դրդիչները որոնք ըլլալն պիտի ըսեմ քիչ մը վերջը։ Ի՞նչ եղաւ այս հարցին հետևութիւնը։ Այն՝ որ հասարակաց կարծիքէն մղուած, պարագայներէն ստիպուած և հաստատ գիտնալով թէ ինչ բանի կը կարօտի հայը ամեն բանէ առաջ, Ներսէս պատրիարքը, չը նայելով այս միջոցին իրեն անհամար զբաղմունքներուն, չը սպասելով, շատ մը պլատոնիկ մարդոց պէս թէ ինչ պիտի ըլլայ, ինչպէս պիտի վերջանայ հայկական հարցը, ժողովեց նորէն որքան կ. Պոլսոյ մէջ բանիբուն, կարողութեան տեր մարդիկ կային, չէ թէ «գործիչ» ըսվողները (անոնցմէ բան չը սպասուիր), հապա ամեն ուշիմ, մտանգէտ և կարողութեան տէր մարդիկ և ըսաւ անոնց. «Հայոց տնտեսական միութիւնը» այսօր ազգին ամենէն կարևոր մէկ պէտքը լեցնելու կոչված է։ Հայոց նիւթական զարգացմանը կրնանք օգնել թէ որ ուզենք։ Պէտք է որ այս ընկերութիւնը այսօր վերստին կենդանանայ։ Ցոյս տուէք որ դուք ազգին ճշմարիտ շահերը կը փնտռէք։» Երեք օր է ուրեմն որ գրեթէ նորէն կազմակերպեցաւ «Հայոց տնտեսական միութիւնը», և եթէ այն օրէն ի վեր բաժանորդ գրուողներուն բազմութենէն դատենք, յառաջանալու և զարգանալու մեծ երաշխաւորութիւն կայ։ Բայց կանխաւ չը դատենք, տեսնենք անոր գործելը և վերջը կը խօսինք։ Իմ գլխաւոր նպատակս է ցոյց տալ թէ ինչպէս երբ հասարակութիւնը իր էնստէնկտովը համոզված է մէկ բանէն, օր մը չէ օր մը այն կերպով բարոյական ճնշում կը բանեցնէ մինչև իսկ անտարբերներուն վրայ (ժողովականներէն շատը ազգային գործի խառնուողներ չէին) որ անկարելի է ուրիշ կերպով վարվել։

Երբ «Մշակը» ի վաղուց և պ. Նիկողոսեան վեց ամիս առաջ այս կամպայնը սկսան, ոմանք կարծեցին և դուցէ կը կարծեն թէ տնտեսական հարցը իրենց կապրիսին կամ աղմուկ գցելու համար էր որ երևան հանեցին։ Այս յիմար մեկնութեան պատճառը այն էր որ գրեթէ ամեն օրագիր, այստեղ թէ այդ տեղ, և անոնց մէկ քանի յայտնի թղթակիցները դէմ եղան այդ կարծիքին, որով, գլխաւորապէս ձեր կողմի հասարակութիւնէն ոմանք ենթադրեցին թէ հարցը ժողովրդեան համակրութիւնը չունի, կամ վաղահաս է և այլն։ Բայց մեր ազգին մէջ, մանաւանդ կ. Պոլսոյ հայոց մէջ, երբէք լրագրութիւնը հասարակաց կարծիքը չէ ներկայացուցած և անոնց թղթակիցները սոսկ իրենց տեսակէտով կը գրեն ամեն խնդիրներու վրայ։ Իսկ ազգին խոհական և լուրջ մասը չեն անոնք ամենեին՝ որ այսօր իբրև գործիչ մէջ ինկած են, ամեն ազգային գործէ դուրս չեն եղեր, անոր համար ալ անոնց անունը միայն կը յիշուի հրապարակի վրայ։ Զէ, ազգին ուշիմ, զգաստ և պարկեշտ մասը, յայտնի պատճառներով երկրորդ պլանի վրայ կեցած է և կը սպասէ (այդ է ճիշդ անոր ալ յանցանքը), որ ինքնիրեն հրապարակը աւելի տիրացու ճամարտակներէն, որ ինքը երևան գայ։

«Մշակը», պ. Նիկողոսեան և իր մէկ քանի հրապարակաւ երևցած համախոհները երբ տընտեսական այս կարևոր հարցը յուզեցին, ուրիշ բան չըրին ուրեմն, եթէ ոչ ազգին ընդհանրութեան, հասարակաց կարծեաց արձագանքը ըլլալ։ Պ. Նիկողոսեան իր խիստ լեզուովը, որ գուցէ անտեղի էր, կ. Պոլսոյ հասարակութեան կողմէն կը խօսէր և կ. Պոլսոյ հրապարակի վրայ չերևցող ինտելիգէնցիային հետ կատարելապէս համամիտ էր այս մասին։ Այս մեծ բազմութիւնն էր ահա իրապէս անոր այստեղի համախոհները և դրդիչները որ վերը յիշեցի։ Եւ գիտէք ինչու օրագիրներէն շատը վրան յարձակվեցան այսպէս յախուռն կերպով։ Վասն զի պ. Նիկողոսեան կամայ թէ ակամայ, իր ծանր և ոչ պարզամտութեամբ ոճովը աւելի իր անձնականին դէմ գրգռեց մէկ քանիներու բարկութիւնը, քան թէ իր յայտնած գաղափարներուն դէմ։ Գաղափարը սկիզբէն անձնականին զոհ գընաց. բայց ինչպէս կըսէր անցեալ օր «Մշակը» այնպիսի մարդիկ գաղափարի զինուորներ են, ինչ զարմանալի բան կայ ուրեմն երբ այդ զինուորներէն երբեմն նահատակ ըլլան։ Երբ մարդ մեղմ կը խօսի՝ այդ լեղի բաժակը չը խմէր. բայց խօսքը ազդու կըլայ և մէկ է ամեն բնութիւն։ Առիթ չեմ ունեցած ձեր յարգելի աշխատակցին հետ տեսնուելու, բայց մէկ օր դպրոցի մը մէջ ճառ խօսելը լսեցի ուր կըսէր թէ «կարելի չէ մեղմ կերպով որ և է խնդիր յուզել և լուծել մեր ազգին մէջ»։ Այսօր սկսաւ երևալ թէ բաւական ճիշդ է եղեր իր այդ կարծիքը։

Այստեղ և այդտեղ կըսեն շատերը. «ինչ պէտք է այսպիսի ատեն այս տեսակ խնդիրներ յարուցանել ազգին մէջ, երբ պէտք ունենք ինքզինքնիս ժողվելու (?)։ Հիմայ մեզի համար քաղաքական ճգնաժամ մըն է»։ Բայց միթէ ազգային կենսական շահերը սրտի առնելը և անոնց վրայ վիճաբանելը երկպառակութիւն գցել է ազգին մէջ։ Միթէ համոզմունքներու ընդհարումը տարաձայնութեանց նշան է։ Միթէ վըշտացած սրտէ դուրս թռած կծու խօսքերը թըշնամական զգացմունքի արտայայտութիւն է։ Միթէ դառն խօսքը սիրած առարկայի մը վրայ խորին սիրոյ համանիշ չէ։ Միթէ հայկական խնդրին լուծմանը արգելք կըլլանք երբ մենք ալ մեր ներքին գործերուն վրայ մտածենք։ Միթէ Ներսէս Պատրիարքը, որ մենակ անձն է հայոց հարցով զբաղող, աւելորդ և վնասակար սեպեց «Ցնտեսական միութիւն հայոց» ընկերութեան խնդիրը յարուցանելը։

Եթէ ռուսահայոց ինտելիգէնցիան կուզէ որ ամեն մարդ հանդարտ և լռիկ նստի և քիթը հովին պարագայները դիտէ, ազգին ներքին գործերը կը յուսայ թէ կարգի կը մտնեն։ Արդեօք այդ ինտելիգէնցիան կը կարծէ որ յառաջադիմութիւնը անգործութեան մէջ է։ Ա՞յդ է ուրեմն այդ ինտելիգէնցիան որ իր անկենդանութեամբը միայն փայլած է մինչև հիմայ, ատոնք են Նազարեանցի, Նալբանդեանցի և «Մշակի» դպրոցին հետևողները, ինչպէս երբեմն կը պարծին։ Բայց

բնական մէկ բան է որ անզգայ կեանք վարողը ժիրութենէ չախորժիր, և երբ գործող ընկերութիւն մը քննադատութեան կառնես, ինչպէս այժմ Միացեալ ընկերութիւնը, «Ինչս կը հասցունես անոր», կըսեն։ Ուղղելը քանդել չը նշանակեր, այլ անոր իսկական օգտին աշխատել։ Ինչու՞ կը հարկադրեն մեզ երբեմն այսքան պարզ ճշմարտութիւններ կրկնելու։

Միացեալ ընկերութեան գնացքը ինքն իսկ է այս ժամուս քննադատողը իր արդի տնօրէն ժողովին ձեռքով, և ազգը որ ասկէ ետքը միշտ հաշիւ պիտի ստանայ առաւել պիտի օգնէ իրեն։ Պիտի տեսնենք որ այդ ընկերութիւնը եթէ այսուհետև առջի խաբուպատիր փայլութեամբ չը պիտի փայլի, գոնէ իր դերը լաւ հասկընալով, աւելի վստահ քայլերով պիտի յառաջանայ։

Իսկ անոնք որ բոլոր այս հարցերուն կը հաւանին թէպէտ, բայց չը ջահայեաց և հեռատես ըլլալ հարկաւոր է կըսեն, տակաւին ցոյց չեն տուած կարծենք իրենց չը ջահայեացութեան և հեռատեսութեան մէկ արդիւնաւոր հետևութիւնը։

Ինչ որ մեզի համար սպասելի էր կատարեցաւ։ Երէկ «Journal d'Orient»-ի արգելվեցաւ Ցանկաստան մտնել։ Անոր մէջ գրուածները մենք միշտ գիտենք, բայց պէտք է որ Եւրոպան իմանայ։ Թիւրքը պիտի կարենայ արգելել որ Եւրոպացիք ալ չը կարդան։ Այդ է բանը։

Ե. Ս.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՆ

Կ. Պոլիս, 26 սեպտեմբերի

Ցաւսով եմ որ արդէն բաւական ծանօթացաք մինչև հիմայ իմ գրածներից Կ. Պոլսի ինտելլիգէնցիայի հետ, բայց ի հարկէ գլխաւորաբար բացասական կողմից. հարկաւոր է այժմ արդարադատութեան համար նորա լաւ կողմերն էլ ասել։ Եթէ Կ. Պոլսի ինտելլիգէնցիայի վրա խօսելու ժամանակ ներկայացնենք մեր աչքի առաջ նոյնպէս ռուսահայ ինտելլիգէնցիան էլ, կը գտնենք հետևեալը. ռուսահայ ինտելլիգէնցիան, այո՛, աւելի է զարգացած և շատ աւելի, քան թէ տաճկահայերինը, բայց այդ զարգացման համեմատ չը կայ նրա մէջ ազգային պարտաճանաչութիւն և եռանդ, մինչդեռ այս կողմից տաճկահայ ինտելլիգէնցիան ընդհակառակը իր ունեցած վերացական, խեղաթիւրած և սխալասիրկ զարգացման հետ միասին, շատ վեր է։ Իւրաքանչիւր նրա ձեռնարկած գործի մէջ, այո՛, քիչ կայ գործնական տարր և բէալականութիւն, քիչ կայ մտածածին և խոր հիմք, քիչ կայ վերջապէս ճշմարիտ և անխարդախ հայրենասիրութիւն, բայց չը նայելով սորան, տաճկահայ երիտասարդութիւնը միշտ շարժման, ոգևորութեան և այլայլման մէջ է, միշտ տրամադրութիւն ունի ազգային գործերով աւելի զբաղվելու աւելի նոցա մասնակից լինելու, քան թէ այն հաղարաւոր համալսարանական մարդիկ, որոնք, ցրված Կովկասի զանազան քաղաքներում, իրանց իդէալը ուրիշ բան չունեն բացի կլուբական ստոր զուարճութիւն, ինչպէս թղթախաղ և այլն։ Ռուսական համալսարանները այս կողմից իւրաքանչիւր տարի ընծայում են հայոց մի քանի տասնեակ այնպիսի մարդիկների, որոնց չը լինելը ոչ միայն աւելի օգուտ կը լինէր հայոց ազգին, այլ գուցէ ամբողջ Ռուսաստանին ևս...

Այսպիսով այս երկու կողմի ինտելլիգէնցիայի մէջ տեղը կանգնած մարդը մի աչքը պահելով սոցա վրա, միւս աչքը դոցա, կամայ ակամայ ասում է մտքի մէջ. «ախ, ինչ լաւ կը լինէր եթէ կարելի լինէր ռուսահայի ինտելլիգէնցիայի զարգացումը և լրջմտութիւնը տալ մասամբ Կ. Պոլսի անբովանդակ հայ ինտելլիգէնցիային, իսկ սորա էլ եռանդի և շարժունութեան մի կտորը տալ այդտեղի ավտոմատ և մեռելոտի դառած հայ համալսարանականներին.» ահա՛ որ ժամանակ միայն կատարեալ ներդաշնակութիւն կը տիրէր երկու կողմի մէջ էլ և ազգային ընդհանուր շահերը շատ արագութեամբ և հաստատ ընթացքով կը զարգանային։ Բայց ինչ միջոց կայ այս օգտաւէտ բարեխառնութիւնը գոյացնելու համար, սա է խնդիրը։ Իմ կարծիքով առանց այս արգասիքին հասնելու ռուսահայ և տաճկահայ գործիչները չեն կարող ոչ միայն որչափ իցէ օգտվել միմեանց ուժերից, այլ ևս գնալով աւելի և աւելի կը խորթանան ու կը հեռանան միմեանցից. և յիրաւի, ինչ համերաշխութիւն կարող է լինել երկու տեսակ մարդկանց մէջ, որոնցից մինը Սերվանտեսի գլխաւոր հերոսների ճչգրիտ և կենդանի տիպն է ներկայացնում, իսկ միւսը ժամանակակից Նիւթապաշտ, դատողամոլ, զգոյշ և անսարբեր չնչողների պատկերն է ձևացնում։ Ի հարկէ այս տեսակ երկու արարածներ, թէպէտ հայախօս և մարդախօս, բայց միմեանց պատահած ժամանակը այնչափ խորթ են թուում միմեանց և անհամապատասխան իրանց բնաւորութեամբ և ամեն բանով, որչափ այծը և ջորին, կովը և ուղտը, հաւը և կատուն և այլն։ Եւ սա շատ բնական է. թիւրքն էլ, պարսիկն էլ, ռուսն էլ, գաղղիացին էլ կարող են լինել երբեմն հայախօս և հայասէր, բայց դաստիարակվելով տարբեր ուղղութեանց, տարբեր և նաև հակառակ սովորութեանց և վարքի մէջ, պատահելով միմեանց և զանազանվելով թէ բնաւորութեամբ, թէ տեմպերամենտով, թէ ձևերով, այնչափ անձնական հակակրութիւն կունենան դէպի միմեանց, որ նոյն սիրեցեալ Նիւթի, նոյն ազգի և նոյն շահերի վրա խօսած ժամանակ, կարող են բոլորովին հակակարծիք և անհամերաշխ յայտնվիլ. սա այնպիսի մի բնական բան է, որը դժուար է հերքել որ և է արուեստական փիլիսոփայութեամբ։

Այս այսպէս լինելով, հիմայ հարցը դալիս է նրան թէ ինչպէս պիտի արած, որ կամաց կամաց տաճկահայ և ռուսահայ ինտելլիգէնցիայի մէջ բնական համակրութիւն և հաւասարակշռութիւն մտնէ, որ այդպիսով կարելի լինի երկու կողմի ուժերից օգուտ քաղել թիւրքաց Հայաստանի բարօրութեան համար։ Սա այնչափ ուշադրութեան արժանի մի խնդիր է, որի մասին մտածելը և կարծիքներ յայտնելը վաղուց էր հարկաւոր, էլ չեմ ասում՝ այսուհետև. ուրեմն պարտաւորութիւն կը համարեմ իմ իմացածը ևս յայտնել այս մասին։

Այս արդիւնքին հասնելու համար ի հարկէ շատ լաւ է, որչափ կարելի է աւելի փոխադարձ շփումներ, ընդհարումներ, մտքի փոխառութիւններ և բարոյական ու նիւթական առընչութիւններ ունենալ, բայց սորա համար հարկաւոր է շատ ստէպ ստէպ այցելութիւններ անել միմեանց այնպիսի մարդիկներով, որոնք իրանց տեսածների ու դիտածների մէջ հաշիւ կը տան հրապարակապէս, համայն ազգի առաջ։ Այսպիսի հաշիւներից յառաջ կը գայ ընդհանուր փոխադարձ հետաքրքրութիւն, վստահութիւն և մտաւոր ու բարոյական պայքար, որի մէջ լոկ կրքերից ծնունդ առած անձնականութիւնները շուտով կը մոռացվեն, իսկ գաղափարների փոխառութիւնները և արծարծումը կը շարունակվի։ Ունենալով այս հանգամանքը աչքի առաջ, ձեր աշխատակիցը չէ բաց թողած ոչ մի առիթ, արհամարած է բոլոր բարոյական զոհաբերութիւններ գոնէ այս մի կտոր պաշտօնը կատարելու համար. թէ որչափ կարողացաւ յաջողիլ նա իր այդ դիտաւորութեան մէջ, դորա մէջ ի հարկէ մարդ ինքը բնաւ քննիչ և դատաւոր չէ կարող լինել... Բայց թէ ժամանակաւոր ընդհարումները, որչափ էլ բուռն և խիստ լինեն նոքա, կարող են հերիք լինել մշտապէս երկու կողմերի մէջ մտաւոր և բարոյական յարակցութեան մի կամուրջ պահել, այդ ի հարկէ ուրիշ հարց է, որը բնականաբար շատ պարզ է և հասկանալի. վատնորոյ այսպիսի յարակցութիւնները չընդհատելու և մշտատև ու հիմնաւոր անելու համար, հարկաւոր է, ինչպէս արդէն գրեցի ձեզ անցեալները, որ կամ իւրաքանչիւր ռուսահայ օրագրութիւն ունենայ միշտ իր սեփական և անկախ ներկայացուցիչը այստեղ, (որ շատ էլ հեշտ չէ մեր լրագիրների այժմեան պայմանների համար), կամ թէ հարկաւոր է ունենալ ռուսահայերին իրանցից մէկի ձեռքով այստեղ հրատարակվող մի լրագիր։ Ունենալով մի անկախ լրագիր կարելի է շատ աւելի բան յառաջացնել այստեղ, քան թէ այդ տեղ, որովհետև մի կողմից սոքա շատ և շատ բաների մէջ ուղղվելու պէտք ունեն, երկրորդ՝ սոքա շատ շուտ ընկճվող և ենթարկվող բնաւորութիւն ունեն քան թէ ռուսահայերը։ Ապացոյցները քիչ չեն իմ այստեղի որ և իցէ մի կէս տարուայ լրագրական գործունէութեան մէջ, չը նայելով որ այս գործունէութիւնը սոցա համար եղել է խռովեցուցիչ և դաժան. թէ որոնք են այդ ապացոյցները, կը յիշեմ միւս անգամ, իսկ հիմայ կը կրկնեմ միայն այն, որ իմ աչքում մի ստիպողական կարևորութիւն է դառել ընդհանուր ազգային շահերի և օգտի տեսակէտով, այն է, որ այսուհետև էլ անտեսելի է մեզ վերաբերվել Կ. Պոլսի ներկայ և ապագայ սերնդի ուղղութեան հեռուից և միջնորդական կերպով։ Այսպէս թէ այնպէս, բայց Կ. Պոլսի մէջ դաստիարակվում են տասնեակ հաղարաւոր դեռահասներ, որոնց ուղղութիւնից և ստացած զարգացումից շատ մեծ կախում ունի նոյնպէս Հայաստանի յառաջադիմութեան գործը, վասնորոյ ազդել սոցա ուսումնարանների թառուցիկ և թեթև ուղղութեան վրա, ազդել սոցա մամուլի անկար և ապիկար դրութեան վրա, հսկել սոցա զանազան ազգային հաստատութեանց անմխիթար կացութեան վրայ, փոխել, ուղղել և բարւոքել այդ ամենը մի մեծ և չնորհակալ ասպարէզ է, մի սուրբ ազգային պարտաւորութիւն, որը պատկանում է ռուսահայերիս, ինչպէս աւելի զարգացում և հաստատամտութիւն ունեցողներին։ Հետևաբար ռուսահայ երիտասարդութիւնը վերջապէս պիտի մտածէ այս պարտաւորութեան վրա և աշխատէ իր գործունէութեան ասպարէզը մասամբ տեղափոխել և Կ. Պոլիս։ Հարիւրաւոր մարդիկ կան Թիֆլիսի մէջ, որոնք համալսարանական ուսում ստացած, գործունէութիւն են որոնում և այդտեղ չը գտնելով նորան, պարապվում են միայն ինտրիգաներով և հողմարածութեամբ, թող գան այդպիսիները այստեղ, գուցէ այստեղ գոքա աւելի արդիւնաւոր կը դառնվեն, քան թէ այդտեղ, ուր իրանց նման համալսարական մարդիկ շատ կան։ Ներսէս պատրիարքը միայնակ է, տիրացու պուբլիցիստներից զզուած է, շահամոլ և անսիրտ էգոիստներից մխիթարութիւն չունի, թող գան ազատ ու անկախ մարդիկ նեցուկ լինելու նորան իրանց մըտաւոր և բարոյական աջակցութեամբ միջնորդ լինելով ռուսահայերի առաջ ամեն ժամանակ, երբ հարկաւոր է պատրիարքին մի չոչափելի օգնութիւն և ստիպողական պէտք։ Այսպէսով միայն տաճկահայերս և ռուսահայերս կարող կը լինենք կամաց կամաց այնչափ մօտենալ միմեանց, կըպչել ու ձուլվել մի հոգի, մի միտք և մի մարմին, որ էլ անհնարին կը դառնայ այսչափ տարբեր ուղղութիւն ունենալ, այսչափ հեռու առընչութիւն մեր հայեացքների և մեր վարմունքի մէջ։

Բոլոր այս խորհրդածութիւնների գլխաւոր շարժառիթը այն իրողութիւնն է, որի մասին ուրախութեամբ իմացայ «Մշակի» վերջին համարներից. նոցանից տեսայ, որ Երևան, Ղարաբաղ և առհասարակ գաւառական քաղաքներում օրից օր հայ լրագիրների թիւը աւելանում է, Կովկասի հայերի մտաւոր և բարոյական դրութիւնը օրից օր բարւոքելու և զարգանալու վրա է, հապա ինչպէս հայութիւն է, որ մտածող չը կայ և տաճկահայ մեր հարազատների կացութեան վրա ևս, որոնց ներկան լինելով այսչափ ապականված և ցեխոտած ղեկավարողների, մամուլի ձեռքին չէ խոստանում ոչինչ մխիթարական ոչ մօտաւոր և ոչ էլ հեռաւոր ապագայում. հարկաւոր չէ լինել միականի, հարկաւոր չէ մտածել միայն իրան գլխի համար, հարկաւոր է ուշադրութեան առնել և այստեղի ժողովրդի վիճակն էլ, որի հետ ի հարկէ աւելի մօտ կապ և առընչութիւն ունի Հայաստանի բարւոքման և յառաջադիմութեան խնդիրը, քան թէ ռուսահայոց բարօրութեան հետ։ Այս խօսքերը ուղղում եմ այն համալսարանական հայ երիտասարդներին, որոնց մէջ հարիւրից գոնէ երկուսը կրում է իր մէջ մարդի սիրտ և հայ հոգի...

Հնագիտական ժողովի բացման և նորա նիստերի մանրամասնութեանց մասին, որ խմբագրում եմ մասամբ «Մշակի», մասամբ «Кавказъ»-ից և «Порядокъ»-ից, շատ ուրախութիւն են զգում իմ այստեղի համախոհները. արդեօք Թիֆլիսի հայ երիտասարդութիւնը (էլ չեմ ասում հայ գիտնականները) պիտի կարողանայ ըստ արժանոյն և վստահ կերպով ցոյց տալ Վիրխովի պէս օտարազգի մեծ հիւրերին հայ ազգի անցեալ փառքը և այժմեան յառաջադիմութիւնը, թէ հետևելով Թիֆլիսի մի «յառաջադէմ» լրագրի երեսուն տարի կրկնած փտած խօսքերին, պիտի լինեն այնչափ «զգոյշ» և «չը ջահայեաց» որ փողոց անգամ տեսնելիս հռչակաւոր հիւրերին, պիտի գլուխները թագցնեն ու մութ անկիւններ փախչեն... Արդեօք մտածեց Թիֆլիսի գերմանական դպրոցի հայ երիտասարդութիւնը առանձնակի և յատուկ կերպով ակադեմական գերմանական գիտնականին իր յարգանքը և մեծարանքը յայտնելու վրա. արդեօք պ. Յով. Քիւրքչեանը հանդէս հանեց իր նշանաւոր աշխատութիւնները և հայ ճարտարապետութեան հրաշալիքը. արդեօք գտնվեցան Թիֆլիսի մեր գործիչները այնչափ հիւրընկալ, որ կարողանային գոնէ մի կարճատև քաղաքավարութեամբ պատուել մեր յարգելի բաղմաշխատ գիտնական պ. պ. Մկրտիչ Էմինին և Քերովբէ Պատկանեանին. Ահա այս հարցերն են, որ մեծապէս հետաքրքրում են ինձ և իմ այստեղի համախոհներիս. այսչափ հանդիսաւոր պատմական անցքեր մինչև չենք տեսնի, հարկաւոր է գտնվենք արժանի ժամանակակից լինելու պատվին...

Գրիգոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՏՈՒՆԻՍ, 1 հոկտեմբերի։ Սեպտեմբերի 28-ին ապստամբները, յարձակվելով Ալի-բէյի վրա, յետ մղվեցան աւար թողնելով։ Երկու կողմի կորուստներն էլ նշանաւոր են։

ԼՕՆԴՕՆ, 1 հոկտեմբերի։ Պարնել կալանաւորված է կէմբրիջի մէջ։

ԽԱՐԿՕՎ, 2 հոկտեմբերի։ Բացվեցաւ Պոկրովսկայա տօնավաճառը, որ խոստանում է աջող լինել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերի։ „Правит. Вѣстн." լրագիրը հաղորդում է. Թագաւոր Կայսրը Իր Ընտանիքով տեղափոխվեցաւ Գատչինա։ „Новое Время" լրագիրը լսել է. իբրև էկսպերտներ գիւղացիների հողեր յետ գնելու հարցի համար հրաւիրվում են պետական խորհուրդը Շչերբատով, Սամարին, Նաումով, Գալագան, Գորչակով և Դմիտրիեվ։ Շուտով կը սկսվի գեներալ Մրովինսկու դատաստանական գործը։ Պաշտպանը Սպասովիչն է։ „С.-Петерб. Вѣдом." լրագիրը հաղորդում է. հոկտեմբերի 1-ին Իզմայիլի մէջ տօնվեցաւ հին աղանդաւորների եպիսկոպոսների աղատութիւնը։ Պատրաստվում է երախտագիտական ուղերձ։ „Порядокъ" լրագիրը լսել է. կառավարչական նախագիծը թոյլ է տալիս գաղթել պետական հողերի վրա այն գիւղերի բնակիչների կէսին, որոնք հողային բաժնի ամենամեծ չափի երրորդականից աւելի չունեն։ Սիբիրեա-կովի երկու նաւերը „Դիկսոն" և „Նորդլանդ" կորան սառուցների մէջ։ Նաւերի վրա եղած մարդիկ ցամաքով վերադարձան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 25 կ., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 75½ կ., չորրորդ 92 ր. 50½ կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 50½ կ., երկրորդ 219 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 75½ կ., երկրորդ 90 ր. 75½ կ., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 7 ր. 64 կ.։ Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 26 պէնս, Ամստերդամի վրա 130,87 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 221 մարկ 50 պֆ., փարիզի վրա արժէ 273 ֆրանկ 75 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 հոկտեմբերի։ „Новое Время" լրագիրը հաղորդում է. հոկտեմբերի 2-ի նիստին էկսպերտները կարծիք յայտնեցին. խմիչքների խանութների մէջ թէ միայն խմելու համար և թէ դուրսը ծախելու համար պէտք է լինեն ուտելիքներ, թէյ, գարեջուր, իսկ բացառապէս դուրսը ծախելը թոյլ տալ ուտելեղէնների խանութներին։ Նոյն լրագիրը լսել է, որ պատերազմական մինիստրը առաջարկեց կլինիկայի այն պրոֆէսորներին չը թոյլ տալ բժիշկ կանանց օրդինատորներ լինել։ Բժշկական կանանց կուրսերը անցնում են ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ձեռքը, զբկվելով Նիկոլաեվսկայա հիւանդանոցից։ „Порядокъ" լրագիրը հաղորդում է, որ Ս. Պետերբուրգ հասել են բոլոր գլխաւոր նահանգապետները։ Հոկտեմբերի 6-ին կը գումարվի մասնաժողով ռուսաց երկաթուղիների վրա ուղևորութեան կանոնները քննելու համար։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ բժիշկ Ռէյլսի մօտ հինգ ամսվայ ընդհատումից յետոյ **ՆՈՐԻՑ ԿԸ ՍԿՍՎԻ** հոկտեմբերի 7-ից։ Առաւօտները 9—10 ժամ ամեն օր։ Երեկոները 5—7 ժամ **ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ** օրերը։ Հասցէն նոյն է, **ԱՐՍԵՆԱԼՆԱՅԱ** փողոց, տուն, № 17։ **ՁՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ** բժշկանոցի մէջ։
2—3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ երեխայական **ԼՕՏՕ** Թիֆլիսու բէալական ուսումնարանի հայ-աշակերտների հրատարակութեամբ։ Վաճառվում է (յօդուտ նոյն դպրոցի աշակերտաց ապագայ **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ**) **ԿՈՎԿԱՍԵԱՆ, ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ** գրավաճառանոցներում և կուկիայի կամրջի վրա պ. Մաթինեանցի խանութում։ Գինն է 50 կօպ.։
3—6

---

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

ԵՐԴՎԵԱԼ ՀԱԻԱՏԱՐՄԱՏԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՄԻԽԱՅԼՕՎԻՉ ԳԱՐԲՕՎՍԿԻ-ԶԱՐԱՆԵԿ բնակվում է Գօլովինսկի փողոցի վրա **ԴՕԲՐԺԱՆՍԿՈՒ** տանը։ Մուտքը Գօլովինսկի փողոցի կողմից։ Ընդունում է ամեն օր առաւօտները 8—10 ժամ, երեկոները 6—8 ժամ։ **ԵՐԿՐԱՁԱՓԱԿԱՆ և ՎԱՐՁԱԿԱՆ** գործերի համար գլխաւորապէս երեկոները։
2—5 (2)

ԴԵՐՁԱԿ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՇՈՒՇԱՆԻԿ ԱՆԵԱՆՑՆԵՐԸ իրանց խանութը տեղափոխեցին կուկիայ ՄԻԽԱՅԻԼՕՎՍԿԻ ՓՈՂՈՑ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ շինութեան մէջ, որտեղ ընդունում են կանանց ամեն տեսակ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ։

Նոյն տեղում ընդունում են ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ձեռնտու պայմաններով։
2—5

Շուտով մամուլի տակից դուրս կը գայ **ԹՋՈՒԿ**, գործ **ԱԼՖՕՆՍ ԴՕԴԷԻ**։ Թարգմ. **Հ. ՏԷՐ-ՄԻՔԱՅԷԼԵԱՆՑ**։ գինը կը լինի 30 կօպ։ Ծախվում է յօգուտ Բէալական ուսումնարանի հայ աշակերտների ապագայ **ԳՐԱԴԱՐԱՆԻ**։ Ցանկացողքը կարող են դիմել այս հասցէով. Реальное училище Гаику Теръ-Микелову. Тифлисъ.
2—5

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ Թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ Թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** Թէյ առանց **ԹՂԹԻ և ԱՐՃՃԻ**։
59—100

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կօնֆետներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՁՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, պլբօմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսսրբիչներ, կլեօնկա, գուլբաներ, ԹԱՄՔԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խերես, կօնեակ և այլն։ Թէյ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն։ Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ մագնեզիա, խմոր ԾԱՐԱՒԻ դէմ, ԽԻՆԱՅԻ գինի ջերմի դէմ, կարբոլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկլօգեմի համար, պարսկական փոշի։ 78—100

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ դասեր ընտանիքներում։ ՀԱՐՑՆԵԼ **„ՄՇԱԿԻ“** խմբագրութեան մէջ։

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՑ, կակաօ, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, Թէյամաններ, սուզօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՁՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսսրբիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարդկերանց գուլբաներ, տուալետի սապօն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՑ**. պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր Թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ։

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՁՕԿ-ԲՕՐ (chokl bore), George Dau-ի գործարանից 120 ր., ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց Թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, պլբօմներ կիսադնով, ֆիլտրաներ և այլն։ Ամենամեծ պահեստ հրացանների և ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐԻ Թիֆլիսում։
23—100

ԴԱՍԵՐ ԶՈՒԹԱԿԻ ՎԵՐԱ

ԱՇԱԿԵՐՏ ԱՊՕԼԻՆԱՐԻ ԿՕՆՏԱԿՈՒ դասեր է տալիս ջութակի վերա իւր տանը և այլ տներում։

Հասցէն Դվորցովոյ փողոց Սարաջևի տանը սենեակ № 12։
10—10

Այս օրերս ստացվեցաւ Թիֆլիսում մեր զիտնական հայրենակից պ. ԷՄԻՆԻ բրոշիւրը ԹԻՖԼԻՍԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԹՈՎ ԳՐԱԾ. „Мойсей Хоренскій и древній эпосъ армянскій“—գինը 1 ռուբլի։ կարելի է ստանալ Մշակի խմբագրատանը և „կենտրօնական գրավաճառանոցում“։
3—5

Մեր ընկերութեան **ԹԷՑ ԳՈՐԾԱԾՈՂՆԵՐԻՑ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ** ուշադրութիւն դարձնել, որ բանդերօլնեի վրա անպատճառ **ԼԻՆԵՆ Կ. և Ս. ՏԱՌԵՐԸ**։

Կ. և Ս. ՊՕՊՕՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ Առևտրական տուն **ՄՕՍԿՎԱՅՈՒՄ**։
5—14

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ և ԻՏԱԼԵՐԷՆԻ դասեր։ ՀԱՐՑՆԵԼ **„ՄՇԱԿԻ“** խմբագրութեան մէջ։

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.
82—150

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կօպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաւորի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։
32—100

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
ԽԱԹԱԲԱԼԱ
(Նոր մշակած)

Ծախվում է կենտրօնական և կովկասեան գրավաճառանոցներում։ Գինն է 50 կօպէկ։
7—10

ՅՕԳՈՒՏ ԹԻՖԼԻՍԻ Բէալական ուսումնարանի հայ-աշակերտաց ապագայ **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ**, ժողովում են հայերէն ընթերցանելի գրեանք։ Ցանկացողք թող բարեհաճեն ուղարկել իրանց նուէրները հետևեալ հասցէով.—Тифлисъ. Реальное училище, Х. Чилингарянцу.
3—6

Մամուլի տակն է, և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնը. **„ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ“** ծխական դպրոցների 4-դ տարվայ դասընթացք, և միանգամայն 1-ն, 2-դ և 3 տարիների համար հրահանգ։

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՅԵՐԷՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ՝

1	Տէր-Զաքարեան՝ Մայր. լեզու մ. ա.	35	կ.
2	— — — — — — մ. բ.	40	„
3	— — — — — — մ. գ.	70	„
4	Ս. Մանդինեանց՝ Նահապետական և հայր. աշխարհ.	65	„
5	— — — — Դիւցազնական աշխարհ.	30	„
6	— — — — Ընտանեկան աշխարհ	25	„
7	Կոստանեանց՝ Ծաղկաքաղ արձակ և չափածոյ բանից.	25	„
8	— — — — — երկրորդ շրջան	60	„
9	— — — — — երրորդ շրջան	40	„
10	Աղայեանց՝ Ուսումն մայր. լեզուի ա. տ.	15	„
11	Նազարեանց՝ Ուսուցիչ՝ Հայոց լեզուի գ. տարի	40	„
12	— — — — — — չորր. տարի	60	„
13	Այվազեանց՝ Նախակրթանք գրաբ. լեզուի մ. ա.	40	„
14	— — — — — — մասն երկր.	45	„
15	— — — — — — մասն երր.	50	„
16	Եղիշէ՝ պատմութիւն Վարդանանց	80 կ. և 1	— „
17	Եզնիկ՝ Եղծ աղանդոց	1	— „
18	Բագրատունի՝ Տարերք քերականութեան	1	25 „
19	Պալասան՝ Քերականութիւն աշխ. լեզուի	50	„
20	Բահաթրեանց՝ Քերակ. աշխ. լեզուի	25	„
21	Տէր-Ստեփանոսեանց՝ Սկզբունք քրիս. հաւատ.	50	„
22	Պօպովեան՝ Սրբազան պատ. հին կտակարանի	60	„
23	— — — — — — նոր կտակարանի	60	„
24	Հէնչէլ՝ Թուաբանական խնդ. ժողովածու (Ս. Մանդ.)	40	„
25	Վարձելեան՝ Դասագիրք թուաբանութեան	70	„
26	Русское слово Տէր-Դաւթեանի	45	„
	Ամենատեսակ ռուսերէն լեզուի ձեռնարկներ։		
27	Սիմոնեանց Ն. Ընդհ. աշխարհագրութեան նախագիտ.	35	„
28	— — — — — նոյն մասն ուսումնական	60	„
29	— — — — — նոյն մասն քաղաքական	60	„

Նոյն տեղը վաճառվում են նաև այն գործածական դասագրքերը, որոնք այս յայտարարութեան մէջ չեն յիշատակված։ Բացի սորանից՝ կենտրօնական գրավաճառանոցին կից բացուած է նաև ուսումնարանապատակաև և կանցելարիական ամենատեսակ իրեղէնների առանձին բաժանմունք։ Գաւառական ուսումնարանների պահանջները կատարվում են առանց յետաձգութեան։ Գումարով գնողներին նշանաւոր զիջումն է լինում։ Անփողպատուէրներն անկատար են մնում։

Дозволено цензурою, Тифлисъ 5 Октября 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.